ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» դեկտեմբերի 2019 թվականի № 36

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20 -Ի № 10 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 20-ի № 10 հերթական նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի տարածքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին

2. Համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 21-ի № 45-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին

3. Համայնքի սեփականության գույքի 2019 թվականի գույքագրման փաստաթղթերի հաստատման մասին

4. Համայնքի 2020 թվականի բյուջեի հաստատման մասին

5. Համայնքի հողակադաստրային քարտեզում ուղղում կատարելու մասին

Կողմ(6) դեմ(0) ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«20» դեկտեմբերի 2019 թվականի № 37-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18 - րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-14-րդ հոդվածներով՝ ավագանին որոշում է.

1. Սահմանել 2020 թվականի համար տեղական տուրքերի հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ. 1-ին ենթակետի «ա» պարբերությունով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 3000 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հազար հինգ հարյուր դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ հազար հինգ հարյուր դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսանհինգ հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ հարյուր յոթանասունհինգ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ հարյուր քսանհինգ հազար դրամ,

դ. խաղատների համար՝ երեք հարյուր հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ հարյուր հիսուն հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ վաթսուն հազար դրամ.

10) համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ինը հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հարյուր տասներկու հազար հինգ հարյուր դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հարյուր հիսուն դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար դրամ.

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ հազար յոթ հարյուր հիսուն դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝յոթ հարյուր հիսուն դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ հարյուր ութսունութ դրամ,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ յոթանասունհինգ դրամ.

12) Խաչփար համայնքի խորհրդանիշը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ հինգ հազար դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երեք միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ:

16) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար քսանհինգ հազար դրամ,

17) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում հինգ հազար դրամ,

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում հիսուն հազար դրամ:

18) Սույն որոշման «1» կետով սահմանված տեղական տուրքերի դրույքաչափերի նկատմամբ կիրառվել է 0.5 գործակից:

2. Սահմանել 2020 թվականի համար տեղական վճարների հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել երկու հազար դրամ,

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել հինգ հազար դրամ,

3)ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել հինգ հազար դրամ,

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել հազար դրամ,

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել երկու հազար դրամ,

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել հազար դրամ,

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանել համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական հարյուր երեսուն դրամ,

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար վճարը սահմանել.

ա. առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ հիսուն դրամ/ 1 քառ. մ/,

բ. արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով՝ (այդ թվում ավտոկայանատեղի) հինգ դրամ/1 քառ. մ/,

գ. գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ երեք դրամ/ 1քառ. մ/,

դ. վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ տասնհինգ դրամ/ 1քառ. մ/,

9) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին

շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը  սահմանել՝ երկու հազար դրամ,

10) համայնքային ենթակառուցվածքի մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել՝ վեց հազար դրամ,

11) համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ հինգ հազար դրամ,

12) համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակառուցվածքի թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ հազար դրամ,

13) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար սահմանել մեկ փաստաթղթի համար՝ հինգ հարյուր դրամ փոխհատուցման վճար:

14) համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց ոռոգման ջրի մատակարարման համար փոխհատուցման վճարը սահմանել 1 խմ-ի համար ութ դրամ:

15) սահմանել համայնքային անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունների առաջարկվող ցանկը և գնացուցակը

ա. կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն՝ հինգ հարյուր դրամ,

բ. ծննդօգնություն՝ թեթև միջամտության դեպքում հազար դրամ, ծանր միջամտության դեպքում հինգ հազար դրամ,

գ.վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում (բացառությամբ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)՝ մանր եղջերավոր անասունների համար հարյուր դրամ, խոշոր եղջերավոր անասունների համար երկու հարյուր դրամ,
դ.կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքարի համար՝ երկու հարյուր դրամ,
ե.ախտահանություն 1 քառակուսի մետրի համար՝ երկու հարյուր դրամ,
զ.միջատազերծում (դեզինսեկցիա)՝ 1 քառակուսի մետրի համար՝ հարյուր դրամ,
է.կրծողների ոչնչացում (դեռատիզացիա)՝ 1 քառակուսի մետրի համար՝ երկու հարյուր դրամ,
ը.արհեստական սերմնավորման համար՝ հինգ հազար դրամ,
թ. կենդանու հերձում՝ մանր եղջերավոր անասունների համար՝ հազար դրամ, խոշոր եղջերավոր անասունների համար՝ երեք հազար դրամ,
ժ. կենդանու բուժում՝ յուրաքանչյուր այցելությունը մանր եղջերավոր անասունների համար հազար դրամ, խոշոր եղջերավոր անասունների համար երկու հազար դրամ,
ի. կենդանիների նախասպանդային զննում՝ մանր եղջերավոր անասունների համար հազար դրամ, խոշոր եղջերավոր անասունների համար երկու հազար դրամ,
լ. կենդանիների հետսպանդային զննում՝ մանր եղջերավոր անասունների համար հազար դրամ, խոշոր եղջերավոր անասունների համար երկու հազար դրամ:

Կողմ(6) դեմ(0) ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » դեկտեմբերի 2019 թվականի № 38-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի № 45-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով՝ ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 21-ի «Համայնքի 2019 թվականի բյուջեի հաստատման մասին» № 45-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացում.

1) Որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերի «49 048.9» թիվը փոխարինել «48 298.9» թվով,
2) 2-րդ կետով հաստատված հավելվածի հատված 1-ի «այլ ոչ հարկային եկամուտների» « 3 000.0» թիվը փոխարինել « 2 250.0» թվով, «ընդամենը» տողի «49 048.9» թիվը փոխարինել «48 298.9» թվով:
3) 3-րդ կետով հաստատված հավելվածի հատված 2-ի աղյուսակի 5-րդ կետի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման «04.2.4 ոռոգում» ծրագրի « 3 500.0» թիվը փոխարինել « 2 750.0» թվով, «ընդամենը» տողի «49 048.9» թիվը փոխարինել «48 298.9» թվով:
4) Որոշման 4-րդ կետով հաստատված հավելվածի հատված 3-ի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝
ա. «4111» հոդվածի «17 770.0» թիվը փոխարինել «17 030.0» թվով,
բ. «4112» հոդվածի «1 481. 0» թիվը փոխարինել «2 221.0» թվով,
գ. «4212» հոդվածի «4 350. 0» թիվը փոխարինել «4 100.0» թվով,
դ. «4251» հոդվածի «800. 0» թիվը փոխարինել «300.0» թվով,
ե. «ընդամենը» տողի «49 048.9» թիվը փոխարինել «48 298.9» թվով:
5) Որոշման 5-րդ կետով հաստատված հավելվածի հատված 6-ի 01.1.1 «ՕՐԵՆՍԴԻՐ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐ» աղյուսակի՝
ա. «4111» հոդվածի «16 630.0» թիվը փոխարինել «15 890.0» թվով,
բ. «4112» հոդվածի «1 386. 0» թիվը փոխարինել «2 126.0» թվով;
6) Որոշման 5-րդ կետով հաստատված հավելվածի հատված 6-ի 04.2.4 «ՈՌՈԳՈՒՄ» աղյուսակի՝
ա. «4212» հոդվածի «3 000.0» թիվը փոխարինել «2 750.0» թվով,
բ. Աղյուսակից հանել «4112 կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 500.0» տողը,
գ. «ընդամենը» տողի «3 500.0» թիվը փոխարինել «2 750.0» թվով:
7) Որոշման 6-րդ կետի «24 510.2» թիվը փոխարինել «33 825.3» թվով,
8) Որոշման 7-րդ կետի 3-րդ ենթակետի «0» թիվը փոխարինել «477. 7 հազար դրամ» թվով և բառերով,
9) Որոշման 7-րդ կետը լրացնել «4.1 » կետով՝
«4.1. Պետությունից հատկացվող սուբվենցիաներ՝ 8 837.4 հազար դրամ,» բառերով և թվով:
10) Որոշման 7-րդ կետի 5-րդ ենթակետի՝
ա. «8 820.0» թիվը փոխարինել «17 657. 4 » թվով,

բ. «7 910.2» թիվը փոխարինել «8 387. 9 » թվով,
գ. «ընդամենը» տողի «24 510.2» թիվը փոխարինել «33 825.30» թվով:
11) Որոշման 7-րդ կետի 6-րդ ենթակետի՝
ա. «14 220.2» թիվը փոխարինել «14 697. 9 » թվով,
բ. «8 470.0» թիվը փոխարինել «17 307. 4 » թվով,
գ. «ընդամենը» տողի «24 510.2» թիվը փոխարինել «33 825.30» թվով:
12) Որոշման 7-րդ կետի 7-րդ ենթակետի՝
ա. «14 220.2» թիվը փոխարինել «14 697. 9 » թվով,
բ. «8 470.0» թիվը փոխարինել «17 307. 4 » թվով:

Կողմ(6) դեմ(0) ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.

# Ո Ր Ո Շ Ու Մ

«20» դեկտեմբերի 2019 թվականի № 39

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով՝ ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի սեփականության գույքի 2019 թվականի գույքագրման փաստաթղթերը:

Կողմ(6) դեմ(0) ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» դեկտեմբերի 2019 թվականի № 40 -Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով՝ ավագանին որոշում է.

1. Հաստատել համայնքի 2020 թվականի վարչական բյուջեն՝

1) եկամուտների գծով՝ 52 407.2 հազար դրամ

2) ծախսերի գծով՝ 52 407.2 հազար դրամ:

2. Հաստատել համայնքի 2020 թվականի վարչական բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հավելվածի հատված 1-ի:

3.Հաստատել համայնքի 2020 թվականի վարչական բյուջեի հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ համաձայն հավելվածի հատված 2-ի:

4.Հաստատելհամայնքի 2020 թվականի վարչական բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելվածի հատված 3-ի:

5. Հաստատել համայնքի 2020 թվականի վարչական բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելվածի հատված 6-ի:

6.Հաստատել համայնքի 2020 թվականի ֆոնդային բյուջեն եկամուտների և ծախսերի գծով՝ 0:

7. Հաստատել համայնքի 2020 թվականի ֆոնդային բյուջեն եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների և հատկացումների հետևյալ չափերով՝

1)համայնքի վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից մուտք ֆոնդային բյուջե՝ 0,

2) համայնքի ֆոնդային բյուջեի ազատ մնացորդ, որն ուղղվում է ծախսերի ծածկմանը՝0,

3) համայնքի սեփականություն համարվող գույքի օտարումից մուտքեր՝ 0,

4) համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացումներ՝ 0:

| Կողմ(6) | դեմ(0) | ձեռնպահ(0) |
|---|---|---|

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Յավելված
Խաչփար համայնքի ավագանու
2019 թվականի դեկտեմբերի 20-ի N 40-Ն որոշման

ՀԱՏՎԱԾ 1

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

| Հ/Հ | ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 1 | Հողի հարկ (այդ թվում) | 4 320.0 |
| | ֆիզիկական անձանցից | 4 238.4 |
| | Իրավաբանական անձանցից | 81.6 |
| 2 | Գույքահարկ | 4 900.0 |
| | Շենք-շինությունների (այդ թվում) | 500.0 |
| | ֆիզիկական անձանցից | 498.8 |
| | Իրավաբանական անձանցից | 1.2 |
| | Փոխադրամիջոցներ | 4 400.0 |
| 3 | Տեղական տուրքեր (այդ թվում) | 430.0 |
| | ոգելից նալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար | 140.0 |
| | ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար | 140.0 |
| | շինարարություն սկսելու թույլտվության համար | 150.0 |
| 4 | Տեղական վճարներ (այդ թվում) | 3 200.0 |
| | աղբահանության վճար | 1 500.0 |
| | մանկապարտեզի ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը | 1 700.0 |
| 5 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վճար | 416.8 |
| 6 | Համահարթեցման սկզբունքով պետական բյուջեից տրվող դոտացիա | 37 140,4 |
| 7 | Այլ ոչ հարկային եկամուտներ | 2 000.0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 52 407.2 |

ՀԱՏՎԱԾ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 01. 1. 1 | Օրենսդիր և գործադիր մարմին պետական կառավարում | 20 906.0 |
| 2 | 01. 3. 1 | Աշխատակազմի (կադրերի) գծով ընդհանուր բնույթի ծառայություններ | 50.0 |
| 3 | 01.3.3 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 170.0 |
| 4 | 01.6.1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 1 410.0 |
| 5 | 04.2.1 | Գյուղատնտեսություն | 100.0 |
| 6 | 04.2.4 | Ոռոգում | 2 500.0 |
| 7 | 05.1.1 | Աղբահանում | 1 500.0 |
| 8 | 06.4.1 | Փողոցային լուսավորում | 300.0 |
| 9 | 08.2.1 | Գրադարան | 1 235.0 |
| 10 | 08.2.4 | Այլ մշակութային կազմակերպություններ | 450.0 |
| 11 | 09.1.1 | Նախադպրոցական կրթություն | 12 500.0 |
| 12 | 09.2.2 | Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն | 100.0 |
| 13 | 10.7.1 | Սոցիալական հատուկ արտոնություններ | 2 300.0 |
| 14 | 11.1.2 | Պահուստային ֆոնդ | 8 886 .2 |
| **Ընդամենը** | | | 52 407.2 |

ՀԱՏՎԱԾ 3

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻԾԱԽՍԵՐԸ՝
ԸՍՏԲՅՈՒՋԵՏԱՅԻՆԾԱԽՍԵՐԻՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4111 | աշխատավարձ | 17 770.0 |
| 4112 | պարգևատրում | 1 481.0 |
| 4212 | էներգետիկ ծառայություններ | 3 400.0 |
| 4213 | կոմունալ ծառայություններ | 1 600.0 |
| 4214 | կապի ծառայություն | 280.0 |
| 4215 | ավտոմեքենայի ապահովագրություն | 50.0 |
| 4221 | գործուղում | 40.0 |
| 4232 | համակարգչային ծառայություններ | 200.0 |
| 4233 | աշխատակազմի մասնագիտ. զարգացման ծառ. | 50.0 |
| 4234 | տեղեկատվական ծառայություններ | 230.0 |
| 4235 | կառավարչական ծառայություններ | 200.0 |
| 4239 | ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 270.0 |
| 4241 | մասնագիտական ծառայություններ | 400.0 |
| 4251 | կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 800.0 |
| 4252 | մեքենաների ընթացիկ նորոգում | 300.0 |
| 4261 | գրասենյակային նյութեր | 100.0 |
| 4264 | տրանսպորտային նյութեր | 800.0 |
| 4267 | սնունդ և տնտեսական նյութեր | 100.0 |
| 4269 | հատուկ նպատակային այլ նյութեր | 200.0 |
| 4511 | սուբվենցիա ոչ ֆինանսական պետ. կազմ. | 12 500.0 |
| 4726 | հուղարկավորության նպաստ | 600.0 |
| 4729 | այլ նպաստ | 1 800.0 |
| 4819 | նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմ. | 200.0 |
| 4823 | պարտադիր վճարներ | 150.0 |
| 4891 | պահուստային ֆոնդ | 8 886.2 |
| **Ընդամենը** | | 52 407.2 |

ՀԱՏՎԱԾ 6

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

01.1.1 ՕՐԵՆՍԴԻՐ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4111 | աշխատավարձ | 16 630.0 |
| 4112 | պարգևատրում | 1 386.0 |
| 4212 | էներգետիկ ծառայություններ | 800.0 |
| 4213 | կոմունալ ծառայություններ | 100.0 |
| 4214 | կապի ծառայություն | 280.0 |
| 4215 | ավտոմեքենայի ապահովագրություն | 50.0 |
| 4221 | գործուղում | 40.0 |
| 4234 | տեղեկատվական ծառայություններ | 200.0 |
| 4239 | ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 20.0 |
| 4241 | մասնագիտական ծառայություններ | 50.0 |
| 4252 | մեքենաների ընթացիկ նորոգում | 300.0 |
| 4261 | գրասենյակային նյութեր | 100.0 |
| 4264 | տրանսպորտային նյութեր | 800.0 |
| 4267 | սնունդ և տնտեսական նյութեր | 100.0 |
| 4823 | պարտադիր վճարներ | 50.0 |
| **Ընդամենը** | | **20 906.0** |

## 01.3.1 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ (ԿԱԴՐԵՐԻ) ԳԾՈՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4233 | աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ | 50.0 |
| **Ընդամենը** | | 50.0 |

## 01.3.3 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4232 | համակարգչային ծառայություններ | 170.0 |
| **Ընդամենը** | | 170.0 |

## 01.6.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4212 | էներգետիկ ծառայություններ | 600.0 |
| 4232 | համակարգչային ծառայություններ | 30.0 |
| 4234 | տեղեկատվական ծառայություններ | 30.0 |
| 4235 | կառավարչական ծառայություններ | 200.0 |
| 4241 | մասնագիտական ծառայություններ | 250.0 |
| 4819 | նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 200.0 |
| 4823 | պարտադիր վճարներ | 100.0 |
| **Ընդամենը** | | 1 410.0 |

## 04.2.1 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4241 | մասնագիտական ծառայություններ | 100.0 |
| | **Ընդամենը** | 100.0 |

## 04.2.4 ՈՌՈԳՈՒՄ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4212 | էներգետիկ ծառայություններ | 2 000.0 |
| 4251 | կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 500.0 |
| | **Ընդամենը** | 2 500.0 |

## 05.1.1 ԱՂԲԱՀԱՆՈՒՄ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4213 | աղբահանում | 1 500.0 |
| | **Ընդամենը** | 1 500.0 |

## 06.4.1 ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4251 | կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 300.0 |
| | **Ընդամենը** | 300.0 |

## 08.2.1 ԳՐԱԴԱՐԱՆ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4111 | աշխատավարձ | 1 140.0 |
| 4112 | պարգևատրում | 95.0 |
| **Ընդամենը** | | 1 235.0 |

## 08.2.4 ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4269 | հատուկ նպատակային այլ նյութեր | 200.0 |
| 4239 | ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 250.0 |
| **Ընդամենը** | | 450.0 |

## 9.1.1 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4511 | սուբվենցիա ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին | 12 500.0 |
| **Ընդամենը** | | 12 500.0 |

9.2.2 ՄԻՋՆԱԿԱՐԳ (ԼՐԻՎ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4729 | այլ նպաստներ | 100.0 |
| **Ընդամենը** | | 100.0 |

10.7.1 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4726 | հուղարկավորության նպաստներ | 600.0 |
| 4729 | այլ նպաստներ | 1 700.0 |
| **Ընդամենը** | | 2 300.0 |

11.1.2 ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ

| ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 4891 | պահուստային ֆոնդ | 8 886.2 |
| **Ընդամենը** | | 8 886.2 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«20» դեկտեմբերի 2019 թվականի № 41

## ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնքի կադաստրային քարտեզի ճշգրտման հետ կապված Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի դիրքորոշմանը տալ բացասական եզրակացություն՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Խնդիրը համայնքի ղեկավարի կողմից բազմիցս ներկայացվել է, սակայն Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի մասնագետների կողմից ճիշտ չի ընկալվել, որի հետևանքով տրվել են հարցի իրարամերժ պատասխաններ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 16-ի № 1334-Ն որոշմամբ Խաչփար գյուղական համայնքի վարչական տարածքը կազմել է 314.4 հա, սակայն նույն որոշման համաձայն տրված հողակադաստրային քարտեզում առկա են մի շարք անճշտություններ՝ Խաչփարի համայնքային սեփականություն հանդիսացող 03-050-0217-0001 և 03-050-0216-0001 ծածկագրերով 2.3 հա հողամասը հողակադաստրային քարտեզում ցույց չի տրվել:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 17-ի № 398-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնքի վարչական սահմանների հատակագիծը, որտեղ վարչական սահմանների փոփոխություն տեղի չի ունեցել:

2011 թվականին Արարատի մարզի Ազատաշեն համայնքի կողմից անօրինական կերպով աճուրդային կարգով օտարվել է Խաչփար համայնքի 03-050-0217-0001 ծածկագրով հողամասից 0.28 հա, որը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից ստացել է պետական գրանցում: Նշված հողամասը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Ազատաշեն համայնքին չի փոխանցվել, հետևաբար, եթե չի փոխանցվել, ապա ինչպես է այն օտարվել և ինչու է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից ստացել պետական գրանցում:

Հայաստանի Հանրապետության կասռավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 383-Ա հրամանով կազմված Խաչփար համայնքի անձնագրում և հողակադաստրային քարտեզում համայնքի վարչական տարածքը կազմել է 314.4 հա և նշվել են 03-050-0217-0001 և 03-050-0216-0001 ծածկագրերով հողամասերը, սակայն Հայաստանի Հանրապետության կասռավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից էլեկտրոնային քարտեզում նշված հողամասերը չեն արտացոլվել:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ մասով և ելնելով վերոգրյալից՝ ավագանին որոշում է.

Ուղերձով դիմել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին՝ միջնորդելու Խաչփար համայնքի հողակադաստրային քարտեզում համապատասխան ուղղումներ կատարելու, համայնքի վարչական սահմանների ճշտման համար.

1.Խաչփար համայնքի հողակադաստրային քարտեզում արտացոլել 03-050-0217-0001 և 03-050-0216-0001 ծածկագրերով հողամասերը:

2. Ազատաշեն համայնքի կողմից անօրինական կերպով օտարված 0.28 հա 03-050-0217-0001 ծածկագրով հողամասից սահմանված կարգով վերադարձնել Խաչփար համայնքին:

3. Համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն՝ քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը հողակադաստրային քարտեզի սխալի հետևանքով կրկնվել են որպես համայնքային սեփականություն:

Կողմ(6) դեմ(0) ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ՌՈՒՆԵԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ